



ՀԱՄՇԻԱՐՀԱՅԻՆ ՕՎԿԻԱՆՈՍԻ ԱՂԲԻ «ԿՂԶԻՆԵՐԸ»

Միկրոպլաստիկները այնքան էլ նկատելի չեն: Դրանք պարունակում են բազմաթիվ թունավոր քիմիկատներ, որոնք ավելացվում են պլաստիկներին՝ դրանք ձկուն, գունավոր, ջրակայուն կամ հրակայուն դարձնելու համար: Միկրոպլաստիկները պարունակում են նեյրոտոքսիկներ և մարդու էնդոկրին համակարգը խաթարող այլ նյութեր, որոնք կարող են առաջացնել քաղցկեղ և այլ առողջական խնդիրներ: Քիմիական նյութերով հագեցած այս մասնիկները մտնում են սննդային շղթա և կուտակվում ձկների ու խեցեմորթների մեջ և այդպիսով մենք կլանում ենք միկրոպլաստիկը: Վերջին փորձերին գիտնականները սկսել են միկրոպլաստիկներ հայտնաբերել մարդու հյուսվածքներում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օվկիանոսում պլաստիկի քանակը մինչև 2040 թվականը կեռասպարկվի և կշարունակի աճել ընդհանուր 50 կգ արագությամբ: Ամեն փարի ավելի քան 10 միլիոն փոսնա պլաստիկ է մտնում օվկիանոս: Այս թափոնների մի մասը փրոհվում է մանր մասնիկների (միկրոպլաստիկների) և կուտակվում ափամերձ և խոր ծովային նստվածքներում: Մնացած խոշոր կտորները փասանակներ շարունակ լողում են ջրի մեջ՝ կազմելով աղբի ամբողջ կղզիներ: Ամենամեծերից մեկը Խաղաղ օվկիանոսում, այսպես կոչված, աղբի փեղն է: Սրանք հարյուրավոր կիլոմետրանոց ջրային փարածքներ են, որոնք ծածկված են մարդու սրտեղձած թափոններով: Տեղի ստոյգ փարածքի սահմաններն անհայտ են, ըստ փարբեր գնահատականների, խոսքը 0,7-1,6 միլիոն կմ² մակերեսի և շուրջ 100 մլն փոսնա թափոնի մասին է:



ԻՆՉ ՀԵՏՔ ԵՆ ԹՈՂՆՈՒՄ ՆԱՎԵՐԸ

Մենք սովորաբար նավթի արտահոսքը համարում ենք նավթի արդյունահանման մեծ օբյեկտի կամ հեղուկանավի հետ կապարված վթարի արդյունք: Նման աղետալի դեպքերը բավականին հազվադեպ են, բայց ամեն օր տեղի են ունենում նավթի համեմատաբար փոքր մասշտաբների արտահոսք ցամաքում, բաց օվկիանոսում, գետերի և լճերի վրա: Դրանք կարող են կապված լինել սովորական շահագործման հետ, օրինակ՝ վառելիք լիցքավորելիս: Յուրաքանչյուր արտահոսք անողղելի վնաս է հասցնում ծովային բույսերին և կենդանիներին: Բացի նավթից, ծովային տրանսպորտը թողնում է նաև ածխածնի հետք. այսպես են անվանում ջերմոցային գազերի արտանետումների ամբողջությունը, ներառյալ ածխաթթու գազը, որն առաջանում է նավերի շարժիչների աշխատանքից: Երբ ածխաթթու գազը փոխազդում է ջրի հետ, առաջացնում է տեղային թթվայնության մակարդակի փոփոխություն (pH գործոն): Այն օրգանիզմները, որոնք սրտեղծում են պարյաններ, հիմնականում փոժում են դրանից, անմասն չի մնում նաև շրջակա էկոհամակարգը:

Օվկիանոսային նավերի մեծ մասը բեռնավորված վիճակում բավականին խորը ընկղմված է ջրում: Նավի իրանի այդ մասին կպչում և բազմանում են ջրիմուռներ, որոնք խոչընդոտում են նավի շարժման սահուն ընթացքը և բավականին լրացուցիչ էներգիա են պահանջում: Արդյունքում, ավելանում է վառելիքի ծախսը և ածխաթթու գազի արտանետումները: Բիմիկոս գիտնականների կողմից մշակվել է ներկանյութ, որը թույլ չի տալիս ջրիմուռներին կառչել նավի իրանից: Այժմ անհրաժեշտություն չկա պարբերաբար մաքրելու նավի իրանը, ինչպիսիք է զգալի քանակության վառելանյութ:

2019թ. գործարկվեց բնական գազի օգտագործմամբ աշխարհում առաջին մեծ հեղուկանավը: Նման վառելիքը զգալիորեն ավելի քիչ արտանետումներ է ուղարկում մթնոլորտ: Մեկ այլ խոստումնալից ուղղություն էլ էլեկտրասնուցվող նավերի սրտեղծումն է: 2017 թվականին Չինաստանում գործարկվեց ամբողջովին էլեկտրական բեռնատար նավ՝ 2000 տոննա բեռնատարողությամբ: Այս տիպի նավերի կառուցումը շարունակական զարգացման միտում ունի: